

## ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# HPV՝ ՄՊՎ (մարդու պապիլոմավիրուսի) պատվաստանյութ. Ինչ է պետք իմանալ

Many vaccine information statements are available in Armenian and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)

Պատվաստանյութի մասին շատ հայտարարություններ հասանելի են հայերեն և այլ լեզուներով: Տես [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)

## 1. Ինչու՞ պատվաստվել:

ՄՊՎ (մարդու պապիլոմավիրուս) պատվաստանյութը կարող է կանխել մարդու պապիլոմավիրուսի որոշ տեսակների վարակումը:

ՄՊՎ վարակը կարող է առաջացնել քաղցկեղի որոշ տեսակներ, այդ թվում՝

- արգանդի վզիկի, հեշտոցի և վուլվայի քաղցկեղ կանանց մոտ
- առնանդամի քաղցկեղ տղամարդկանց մոտ
- անալ քաղցկեղ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց մոտ
- Նշագեղձերի, լեզվի հիմքի և կոկորդի հետևի հատվածի քաղցկեղ (օրոֆարինգի քաղցկեղ) և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ

ՄՊՎ վարակը կարող է նաև առաջացնել անոգենիտալ գորտնուկներ:

ՄՊՎ պատվաստանյութը կարող է կանխել HPV-ի հետևանքով առաջացած քաղցկեղի ավելի քան 90%-ը:

ՄՊՎ-ն փոխանցվում է ինտիմ մաշկային կամ սեռական շփման միջոցով: ՄՊՎ վարակներն այնքան տարածված են, որ գրեթե բոլոր մարդիկ իրենց կյանքի ընթացքում ինչ-որ ժամանակ ունենում են ՄՊՎ-ի առնվազն մեկ տեսակ: ՄՊՎ վարակների մեծ մասը 2 տարվա ընթացքում ինքնաբերաբար անհետանում է: Բայց երբեմն ՄՊՎ վարակները երկար են տևում և կարող են հետագայում քաղցկեղ առաջացնել:

## 2. ՄՊՎ պատվաստանյութ

ՄՊՎ պատվաստանյութը սովորաբար խորհուրդ է տրվում 11 կամ 12 տարեկան դեռահասներին՝ համոզվելու համար, որ նրանք պաշտպանված կլինեն նախքան վարակվելը: ՄՊՎ պատվաստանյութը կարող է տրվել

սկսած 9 տարեկանից, և պատվաստումը խորհուրդ է տրվում բոլորին մինչև 26 տարեկան:

ՄՊՎ պատվաստանյութը կարող է տրվել 27-ից 45 տարեկան մեծահասակներին՝ հիվանդի և բժշկի միջև քննարկումների հիման վրա:

Երեխաների մեծամասնությանը, ովքեր ստանում են առաջին դեղաչափը մինչև 15 տարեկանը, անհրաժեշտ է ՄՊՎ պատվաստանյութի 2 դեղաչափ: Այն անձանց, ովքեր առաջին դեղաչափը ստանում են 15 տարեկանում կամ հետո, և ավելի երիտասարդ մարդկանց, ովքեր ունեն որոշակի իմունային անբավարարություն, անհրաժեշտ է 3 դեղաչափ: Ձեր բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

ՄՊՎ պատվաստանյութը կարող է տրվել միաժամանակ այլ պատվաստանյութերի հետ:

## 3. Խոսեք ձեր բժշկի հետ

Տեղեկացրեք ձեր պատվաստման մատակարարին, եթե պատվաստանյութ ստացողը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա ՄՊՎ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո** կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիա**
- **հղի է** – ՄՊՎ պատվաստանյութը խորհուրդ է տրվում միայն հղիությունից հետո

Որոշ դեպքերում ձեր բժիշկը կարող է որոշել հետաձգել ՄՊՎ պատվաստումը մինչև հետագա այցելություն:

Թեթև հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն, ունեցող մարդիկ կարող են պատվաստվել: Մարդիկ,



U.S. Department of Health and Human Services  
Centers for Disease Control and Prevention

ովքեր միջին ծանրության կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև ապաքինվեն, նախքան ՄՊՎ պատվաստանյութ ստանալը:

Ձեր բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

---

#### 4. Պատվաստանյութի հանդեպ ռեակցիայի ռիսկերը

---

- ՄՊՎ պատվաստումից հետո ներարկման տեղում կարող է առաջանալ ցավ, կարմրություն կամ այտուց:
- ՄՊՎ պատվաստումից հետո կարող է առաջանալ ջերմություն կամ գլխացավ:

Բժշկական միջամտություններից հետո մարդիկ երբեմն ուշագնաց են լինում, այդ թվում՝ պատվաստումից հետո: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե դուք գլխապտույտ, տեսողության փոփոխություն կամ ականջներում զնգոց ունեք:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ քիչ հավանականություն կա, որ պատվաստանյութը ևս լուրջ ալերգիկ ռեակցիա, այլ լուրջ վնասվածքներ կամ մահ կարող է առաջացնել:

---

#### 5. Ինչ կլինի, եթե լուրջ խնդիր կա:

---

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի՝ կլինիկայից հեռանալուց հետո: Եթե դուք տեսնում եք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (ցան, դեմքի և կոկորդի այտուց, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և մարդուն տեղափոխեք մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հաղորդել Պատվաստանյութի անբարենպաստ իրադարձությունների հաղորդման համակարգին (VAERS): Ձեր բժիշկը սովորաբար կներկայացնի այս զեկույցը, կամ դուք կարող եք դա անել

ինքներդ: Այցելեք VAERS-ի կայք [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: VAERS-ը նախատեսված է միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար, և VAERS-ի անձնակազմի անդամները բժշկական խորհրդատվություն չեն տալիս:

---

#### 6. Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիր

---

Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է փոխհատուցելու այն մարդկանց, ովքեր կարող են վնասվածքներ ստանալ որոշակի պատվաստանյութերից: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայք

[www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation)

կամ զանգահարեք **1-800-338-2382**

հեռախոսահամարով ծրագրի և հայց

ներկայացնելու մասին տեղեկանալու համար:

---

#### 7. Ինչպես կարող եմ ավելին իմանալ:

---

- Չարցրեք ձեր բժշկին:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության բաժին:
- Պատվաստանյութերի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Սննդամթերքի և դեղերի վարչության (FDA) կայքը՝ [www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines](http://www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines).
- Կապ հաստատեք Յիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) հետ:
  - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
  - Այցելեք CDC-ի կայք [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines):

Armenian translation provided by California Department of Public Health, Immunization Program



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

DCH-1339bA

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.